# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ

Տեսության մեջ արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը և մասնագիտացումը տնտեսական գործունեության օբյեկտների տարածական բաշխումը ու արտադրության տարբեր ձևերի գործողության կենտրոնացումը սահմանափակող գործոնները ուսումնասիրող, ինչպես նաև դրանց տարածքային տեղաբաշխման ու առանձին գործողությունների վրա աշխատանքի բաժանման բնույթը պարզելու ու կանխատեսելու փորձ անող տնտեսագիտության բաժիններից են: Արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման արևմտյան տեսաբանները հիմնականում քննարկում են գյուղատնտեսական ապրանքարտադրողների արտադրական գործունեության իրականացման տեղադիրքի վերաբերյալ որոշում ընդունելու խնդիրը: Միաժամանակ ուշադրություն է դարձվում ագրարային հատվածի տարածքային կառուցվածքին, խոշոր ու փոքր քաղաքների տեղաբաշխմանը, իսկ քաղաքների տնտեսության շրջանակներում՝ տնային տնտեսությունների տեղադիրքին: Արտադրության տեղաբաշխման մասին տեսության հիմնադիր Ի. Գ. ֆոն Տյունենը 1826 թ. «Մեկուսացած պետությունը գյուղատնտեսության և ազգային տնտեսության հետ իր հարաբերություններում» աշխատության մեջ առավելագույն շահույթ ստանալու նպատակով առաջարկել է գյուղատնտեսական մթերքների սպառման կենտրոնի (շուկայի) շուրջը գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և տարածքային (զոնալ) մասնագիտացման հատուկ մոդել: Այլ խոսքով, Տյունենը տեսական ընդհանրացման տարածքային մոդել է մշակել՝ օգտագործելով այնպիսի բնորոշումներ, ինչպիսիք են հեռավորությունը կենտրոնից (շուկայից) և հողատարածությունից: Տրանսպորտային ծախքերը՝ որպես տվյալ մոդելի մեջ գծային ֆունկցիա, առանձնացված են գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ու մասնագիտացման և հողօգտագործման ձևերի վրա ազդող տարածքային և այլ գործոններից: Նա ենթադրում էր, որ տարածքի յուրաքանչյուր կետում գյուղմթերքի գինը տրանսպորտային ծախքերի մեծությամբ տարբերվում է քաղաքային գներից, որը ուղիղ համեմատական է ապրանքի (բեռի) զանգվածին և տեղափոխության հեռավորությանը: Ելակետ ընդունելով վերոհիշյալը՝ նա գտնում էր, որ այն մթերքը, որի տեղափոխության արժեքը համեմատաբար բարձր է (այսինքն՝ արտադրանքի տեղափոխության ծախքերը հարաբերականո-

րեն բարձր են նրա արժեքից), պետք է տեղաբաշխել մերձքաղաքային գոտում: Այս դեպքում բուսաբուծությունը մասնագիտանում է շուտ փչացող և դժվար փոխադրելի մթերքների՝ բանջարեղենի, պտուղների ու հատապտուղների, կարտոֆիլի արտադրությամբ, որոնց տեղափոխության ծախքերը հեռավոր տարածաշրջաններից համեմատաբար մեծ են:

Անասնաբուծության մասնագիտացման գլխավոր շուկայական ենթաձյուղը կաթնատու տավարաբուծությունն է, որը հիմնականում ունի մսուրային պահվածք, ինչպես նաև թռչնաբուծությունը ու խոզաբուծությունը՝ համապատասխանաբար դիետիկ ձվի և բեկոնի ու թարմ մսի արտադրությամբ: Մինչդեռ տեղափոխության ցածր արժեք ունեցող գյուղատնտեսական մթերքների արտադրությունը տեղաբաշխվում է շուկայական կենտրոնից ավելի հեռու՝ ծայրամասային գյուղատնտեսական գոտիներում: Այս դեպքում բուսաբուծությունը հիմնականում ունի ոչ ապրանքային սպառողական նշանակություն: Անասնաբուծության ենթաճյուղերից զարգացած է էքստենսիվ տավարաբուծությունը և արածովի ոչխարաբուծությունը, որոնք շուկային մատակարարում են միս, կարագ, բուրդ և այլն: Տնտեսագիտության տեսության մեջ Տյունենի գլխավոր ներդրումը համարվում է գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման վերաբերյալ ընդունված վճիռի դեպքում տրանսպորտային ծախքերի գնահատումը:

Հայրենական տնտեսագետ գյուղատնտեսներից տվյալ հիմնախնդրի վերաբերյալ առաջին գիտական աշխատությունները պատկանում են Ա. Այրումյանին, որը գտնում էր, որ գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման հիմնական չափանիշը՝ տնտեսության պահանջները բավարարելու համար տարվա ժամանակահարմար աշխատուժի և արտադրության միջոցների հավասարաչափ օգտագործումը, բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերի առավելագույն զուգակցումն է[1]: Ընդ որում՝ գլխավոր ենթաճյուղը որոշում է տնտեսության մասնագիտացումը, քանի որ այն առավել մեծ տեղ է գրավում ապրանքային և, որպես կանոն, համախառն արտադրանքի, աշխատանքի ծախսերի և դրամական եկամուտների մեջ: Գլխավոր և լրացուցիչ ենթաճյուղերը կազմում են միասնական ամբողջություն, դրանց զուգակցման շնորհիվ համալիր օգտագործվում են հողային ռեսուրսները, աշխատանքի գործիքներն ու աշխատուժը, և աշխատանքի ու արտադրության միջոցների նվազագույն ծախսերի դեպքում առավելագույն մթերքների արտադրություն է ապահովում: Այդ հիմնական չափանիշներն օրինաչափ են ոչ միայն պլանային տնտեսության, այլև շուկայական հարաբերությունների համար: Ուշադրության է արժանի նաև տեխնիկայի և աշխատուժի հավասարաչափ լիաբեռնելու նպատակով գիտնականի առաջարկությունը

[1] Տե՛ս **Ա. Այրումյան,** Հայաստանի գյուղատնտեսության տեղաբաշխումն ու մասնագիտացումը, Եր., 1974, էջ 21:

գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղների և խաղողի աճեցման աշխատանքները կատարելու չհամընկնող ժամկետների առումով: Իսկ դա ոչ միայն գյուղատնտեսական արտադրության արդյունավետության աճի, այլև եկամուտների ավելացման աղբյուր է:

Արտադրության ռացիոնալ տեղաբաշխում և մասնագիտացում ասելով պետք է հասկանալ հնարավորություն որոշակի տարածքի վրա՝ հաշվի առնելով նրա բնակլիմայական պայմանները՝ տնտեսելու հասարակական աշխատանքը, պահպանելու հողերի բնական բերրիությունը, բարենպաստ դարձնելու տրանսպորտային փոխադրումները իրացման շուկաներ, ապահովելու մթերքների համախառն արտադրության պլանավորվող ծավալները և ստանալու առավելագույն շահույթ: Բայց և այնպես, գիտականորեն հիմնավորված արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման հիմնախնդիրները անհրաժեշտ է փնտրել առաջադրված նպատակի մեջ, առաջին հերթին՝ պարենային ապահովության մակարդակի բարձրացման, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման խնդիրների լուծմամբ:

Օրինակ, թռչնաբուծությունը Հայաստանում նոր նշանակություն ձեռք բերեց տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացման և տեխնոլոգիաների ու կառավարման համակարգերի կիրառման հենց սկզբնական փուլում, երբ քաղաքների ու արդյունաբերական խոշոր կենտրոնների շրջակայքում կառուցվեցին թռչնաբուծական ֆաբրիկաներ:

Ագրարային հատվածի շուկայական բարեփոխումները որոշակի ճշգրտումներ մտցրին հայրենական թռչնաֆաբրիկաների գործունեության մեջ. նրանցից շատերը, զրկվելով եկամուտ ստանալու միջոցներից, զգալիորեն կրճատեցին արտադրության ծավալները կամ դադարեցրին գործունեությունը՝ թողնելով միայն ձվի վերամշակման և փոշու արտադրությունները, որոնք, սակայն, տևական չգործեցին: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո գրեթե ամբողջովին դադարեցին հատիկի, համակցված կերի և դրա առանձին բաղադրիչների ու բուժանյութերի ներկրումները այլ հանրապետություններից, խզվեցին տարիներով գործող ուղղահայաց և հորիզոնական տնտեսական կապերն ու մատակարարումները: Արդեն 1992 թ. Հայաստանի թռչնարդյունաբերության տնտեսություններում 80 %-ով կրճատվեց մսատու ճտերի արտադրությունը, վերացվեց ածան հավերի գերակշիռ մասը, ինչպես նաև ամբողջ մայրական կազմը: Սակայն 1990-ական թվականների երկրորդ կեսին մասնավոր ընկերությունների ներդրումների, մատակարար-իրացնող կազմակերպությունների ու ձեռներեցների և վերամշակող ձեռնարկությունների միջև անմիջական կապերի ստեղծման ու ինտեգրման ճանապարհով ոչ միայն կանխվեց թռչնաբուծության հետագա անկումը, այլև նախապայմաններ ստեղծվեցին այդ ենթաճյուղի հետագա ռացիոնալ տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման համար: Այսպես, հանրապետության նախալեռնային գյուղատնտեսական գոտում խոշորագույն

«Արզնի» թռչնաֆաբրիկան, իսկ այնուհետև նրա հիման վրա ստեղծված «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն ընդլայնվեց, զարգացրեց անասնաբուծության այլ ենթաճյուղեր և թռչնատավարախոզաբուծական խոշոր համալիրի վերածվեց (այն ունի շուրջ 550 հազ. ածան հավ, տարեկան արտադրում է 90 մլն ձու և 600 տոննա թռչնամիս)[2]:

Թռչնաբուծության՝ որպես դիետիկ մթերքներ մատակարարող ուրույն ենթաճյուղի ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման հիմնախնդիրը հարկավոր է լուծել համալիր՝ առաջնորդվելով համապետական շահերով: Պետք է հաշվի առնել, որ հանրապետության մասնագիտացված գյուղատնտեսական որոշ գոտիներում (Արարատյան դաշտ, նախալեռնային գոտի, հյուսիս-արևելք և այլն) ցածր բերքատվության և զգալի ծախսերի պատճառով հացահատիկային մշակաբույսերի արտադրությունը անեկամտաբեր է: Առաջին հայացքից թվում է, որ թռչնաֆաբրիկաները անհրաժեշտ է տեղաբաշխել այնպիսի գյուղատնտեսական գոտիներում (Շիրակում, Սևանի ավազանում), որտեղ բարձր է հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը, և զգալիորեն քիչ են միավոր արտադրանքի հաշվով ծախսերը: Բայց այդ դեպքում առաջանում է արտադրանքի իրացման գործնականորեն անլուծելի խնդիրը՝ պայմանավորված տեղափոխության մեծ ծախքերով, իսկ գլխավորը ապրանքային տեսքի և որակի պահպանության դժվարություններն են: Ուստի տնտեսապես շահավետ է արտադրությունը տեղաբաշխել խոշոր քաղաքներից և արդյունաբերական կենտրոններից ոչ հեռու՝ 50 կմ վրա, ցանկալի է բնակչության թվաքանակով ոչ մեծ գյուղական համայնքներում: Այդ դեպքում նախ լուծվում է խոշոր քաղաքների շրջակա միջավայրի չաղտոտման խնդիրը, երկրորդ՝ բավարարվում է աշխատանքային ռեսուրսների պահանջարկը, քանի որ թռչնաֆաբրիկայում աշխատել կարող են ոչ հեռու տեղաբաշխված գյուղական համայնքներից, երրորդ՝ թռչնաղբը ավելի շատ ազոտ պարունակող արժեքավոր օրգանական պարարտանյութ է, և ճիշտ պահպանելու (կոմպոստի վերածելու) ու օգտագործելու դեպքում այն լավագույն բաղադրատարր է ծառայում հողերի բնական բերրիությունը բարձրացնելու համար, չորրորդ՝ ապահովվում է զբաղվածություն և նյութատեխնիկական ռեսուրսների տնտեսում, հինգերորդ՝ թռչնաֆաբրիկայում զգալիորեն բարձրանում են բոլոր աշխատողների եկամուտները և կենսամակարդակը, բարելավվում են նրանց բնակության պայմանները և գյուղական համայնքների ենթակառուցվածքները: Համակցված կերի և դրա առանձին բաղադրիչների տեղափոխությունը անհամեմատ ավելի էժան է, քան պատրաստի արտադրանքի տեղափոխությունը: Կարևոր է, որ մատակարար-իրացնող կազմակերպությունների գործունեությունը լինի անխափան, այսինքն՝ դրսևորվի որո-

[2] Տե՛ս **Ս. Ավետիսյան,** Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., 2010, էջ 61:

շակի շահագրգռվածություն, իսկ դա, անկասկած, առկա է և կապված է գործունեության այդ տեսակից շահույթ ստանալու և բաշխելու հետ: Այս համատեքստում կարող ենք շեշտել, որ հացահատիկի արտադրությունը առնչվում է երկար ժամանակաշրջանի ընթացքում փոխհատուցվող դրամական միջոցների և նյութական ռեսուրսների ծախսերի հետ: Դա ամենից առաջ բերքի հաջորդ տարվա ծախսերն են, այսինքն՝ աշնանացան հացահատիկների արտադրության անավարտությունը, իսկ հաջորդ տարում՝ ծախսերը գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացում: Բնականաբար, մատակարար-իրացնողները սեփական շրջանառության միջոցների պակասություն են զգում:

Երբ մենք գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման խնդիր ենք քննարկում, ապա անմիջապես մտաբերում ենք ժամանակակից ագրոլանդշաֆտների և հարմարվողական-լանդշաֆտային գյուղատնտեսության նախագծման մեթոդաբանության մեջ տեղ գտած ագրոարտադրական գործունեության լանդշաֆտա-էկոլոգիական սկզբունքը:

Այս համատեքստում փորձել ենք բացահայտել «տեղաբաշխման գործոններ» հասկացության բովանդակությունը այսպես կոչված «լանդշաֆտա-էկոլոգիական» մոտեցման հիման վրա: Դիցուք, տեղաբաշխման օբյեկտը (տվյալ դեպքում՝ «տնտեսավարողը») և նրա գործելու համար անհրաժեշտ լանդշաֆտային գոտին (տվյալ դեպքում՝ շրջակա միջավայրը՝ ամբողջը, որ գտնվում է օբյեկտի տեղաբաշխումից դուրս), որպես կանոն, չեն համընկնում տարածության մեջ: Օբյեկտների մեկուսի լինելու աստիճանից և նրանց համար անհրաժեշտ արտադրության պայմաններից կախված՝ «համատեղումը» պահանջում է փոփոխվող անհրաժեշտ ծախսեր, և այդ ծախսերը ու դրանց փոփոխականությունը արտացոլվում են արտադրության ծախքերի կառուցվածքում:

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման հիմնախնդրի այսպես կոչված «լանդշաֆտա-էկոլոգիական» բարդությունը պարզաբանենք լեռնաանտառային լանդշաֆտային գոտում անտառալեռնային մսատու խոզաբուծության օրինակով: Այսպես, հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու լեռնաանտառային լանդշաֆտային գոտում բտման ամբողջ ժամանակահատվածում խոզերը առավելագույնս են օգտագործում անտառների վայրի պտղատու ծառատեսակների (ամենից առաջ՝ կաղինը ու հաճարը), արոտների և մարգագետինների կերերը: Խոզերին միաժամանակ լրացուցիչ տրվում է խտացրած կեր, որը կարող է կազմել կերաբաժնի սննդատարության պահանջարկի կեսը: Այստեղ կարելի է կազմակերպել խոշոր խոզաբուծական համալիր՝ ոչ պակաս, քան 3000 գլխաքանակով, այդ թվում՝ 300 մերուններ:

Բայց կերի համար անտառների վայրի պտուղների, արոտների և մարգագետինների պահանջարկով պայմանավորված՝ շրջակա միջա-

վայրի աղտոտման, էկոլոգիական հավասարակշռության խախտման և, հողերի բերրիության անկման հետ կապված՝ ավելացված ծանրաբեռնվածությունը դառնում են դժվարությամբ լուծվող խնդիր:

Բացի դրանից, ցանքաշրջանառության յուրացման և առանձին հողամասերի վրա հողերի որակի հաշվառմամբ մշակաբույսերի տեղաբաշխման և հերթագայման պահանջները պահպանելու անհրաժեշտության պատճառով դժվարություններ են առաջանում նաև կերարտադրության կազմակերպման հարցում: Դեռ ավելին, խոզի բտումը պահանջում է զգալի ծախսեր. հացահատիկային մշակաբույսերի (գարու) և թիթեռնածաղկավոր կերային խոտերի աճեցման համար անհրաժեշտ են նաև ձեռնարկություններ՝ համակցված կերարտադրության արդյունաբերություն:

Տավուշի մարզում, օրինակ, խոզի մսի արտադրության լայնածավալ տարածաշրջանային «պոլիգոնի» ստեղծումը հանգեցնում է բացասական հետևանքների՝ չնայած բարեկարգ գյուղական համայնքների (հիմնականում առանձնատնային տիպի), լավորակ ճանապարհների և քաղաքին մոտեցող ենթակառուցվածքների առկայությանը: Խոշոր մասնագիտացված համալիրներով ներկայացված այն ձեռնարկությունները, որոնք չեն բացառում էկոլոգիական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, որպես կանոն, ավելի են դժվարացնում էկոլոգիական խնդիրների լուծումը: Մեզ թվում է, որ ժամանակակից գյուղատնտեսության զարգացման արդյունաբերականացումը «բնություն-տարաբնակեցում-տնտեսություն» համակարգի հաշվեկշռված զարգացման լավագույն միջոցը չէ: Տհաճ է ապրել գոմաղբի հոտի և տարածքը չափից ավելի մշակելի դարձնելու պայմաններում: Դա է պատճառը, որ երիտասարդությունը, դպրոցն ավարտելով, հեռանում է ծննդավայրից: Ոչ վերջին դերն են խաղում աշխատանքի ոչ գրավիչ լինելը և նրա ինտենսիվացումը, որոնք աշխատատեղերի կրճատման պատճառ են դառնում:

Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտին դեռևս անբավարար է ուսումնասիրված, և առկա են բնառեսուրսային ներուժը ավելի ռացիոնալ օգտագործելու հնարավորություններ: Հեռանկարային ուղիներից մեկը համարվում է հանգստի և էկոզբոսաշրջության ձևերի զարգացումը, որոնք պետք է ակտիվացնեն ավանդական գյուղատնտեսության, տնայնագործության և սպասարկման ոլորտները: Ընդ որում՝ հանգստի և էկոզբոսաշրջության զարգացումը սերտորեն կապված է տրանսպորտային շինարարության, ժողովրդական զբաղմունքի և տեղական արդյունաբերության զարգացման հետ:

Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտում, էկոլոգիական վիճակով պայմանավորված, բնառեսուրսային ներուժը ռացիոնալ օգտագործելու համար անհրաժեշտ է որոշել «տարածքի տարողությունը»՝ ինչպես տնտեսական օբյեկտների, այնպես էլ բնակչության համար:

Գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման խնդիրը անմիջականորեն կապված է

գյուղատնտեսական հողատեսքերի յուրացման պատմական գործընթացների և ինտենսիվ տեխնոլոգիաների արմատավորման հետ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկայական բարեփոխումների փուլում հանրապետության գրեթե բոլոր մարզերում գյուղատնտեսական հողատեսքերը կրճատվել են: Ստեղծված պայմաններում, մեր կարծիքով, տնտեսավարման ինտենսիվ տիպի պահպանման հետ մեկտեղ, ներմուծումը տեղական արտադրանքով փոխարինելու համար անհրաժեշտ է ապահովել էքստենսիվ տնտեսական աճ: Ընդ որում՝ կարեվոր է չնվազող արդյունավետություն պահպանելու սկզբունքը, այսինքն՝ սեփական ագրոարտադրական ռեսուրսները ռացիոնալ և արդյունավետ օգտագործմամբ նախկինում չյուրացված հողատարածքները ցանքաշրջանառության մեջ ներգրավելով՝ ապահովել հիմնական պարենամթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակ:

Մասնավորապես, բազմամյա տնկարկների ընդարձակման և պտղի, խաղողի, հատապտղային ու տեխնիկական որոշ մշակաբույսերի արտադրության ավելացման համար առկա են մեծ հնարավորություններ հանրապետության լեռնային տարածքի հարավային կողմնադրության լանջերին: Այսպես, հունդավոր պտուղների մշակումը հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու լեռնային տարածաշրջաններում միջին հաշվով ապահովում է 66,3–75,5 հազ.դրամ/հա զուտ եկամուտ: Օրինակ՝ Սյունիքի մարզում անջրդի լեռնալանջերի վրա 1 հա խաղողի և մրգատու այգուց զուտ եկամուտը միջին հաշվով հավասար է 37,7–40,5 հազ. դրամի:

ՀՀ գյուղատնտեսական տարբեր գոտիներում լանջերի դարավանդելու ծախսերը կազմում են 200–350 հազ. դրամ/հա, որը փոխհատուցվում է 4–5 տարվա ընթացքում: Ջերմաստիճանային ինվերսիաների հետևանքով բազմամյա տնկարկները ավելի լավ են ցրտակայում լանջերի, քան ցածրադիր գոտու վրա: Բազմամյա տնկարկների՝ լեռներում առաջ շարժվելը հնարավորություն է տալիս ազատելու ցածրադիր և նախալեռնային գոտիների ցրտավտանգավոր տարածքները՝ դրանցում հացահատիկային, բանջարաբոստանային և կերային մշակաբույսեր աճեցնելու համար, ամբողջությամբ մեքենայացնել դրանց մշակությունը և ստանալ բարձր բերք:

Անասնաբուծությունը հիմնականում պետք է մասնագիտանա մարզագետնաարոտային տնտեսությունների վարման էքստենսիվ ձևերի երկու հիմնական ուղղություններով՝ մսակաթնատու արածովի տավարաբուծություն և ալպիական ու ենթաալպիական արոտավայրերի կերային ռեսուրսները առավելագույնս օգտագործող մսակաթնաբրդատու ոչխարաբուծություն: Այդ գոտում տեղաբաշխված տնտեսությունների մեծ մասն աչքի է ընկնում մասնագիտացման բարձր մակարդակով, որը, սակայն, ոչ միշտ է ուղեկցվում արտադրության բարձր համակենտրոնացմամբ (շատ են սակավազոր և ցածր եկամտաբերությամբ գյուղացիական տնտեսությունները):

ՀՀ-ում տնտեսական նպատակահարմարության հաշվառմամբ գյուղատնտեսական արտադրության էքստենսիվ տնտեսական աճը պետք է ուղղված լինի առանձին գյուղատնտեսական գոտիներում ագրոարտադրական ռեսուրսների առավելագույն օգտագործմամբ գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխմանը և մասնագիտացման խորացմանը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և էկոլոգիական խնդիրների լուծմանը (ներառյալ բնապահպանական և ժողովրդագրական գործոնները)։ Բացի դրանից, հնարավոր է դառնում վերականգնել նաև լեռնային լքյալ գյուղական բնակավայրերը։

Տնտեսության ագրարային հատվածի ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման գործընթացում կարող են փոփոխություններ լինել, եթե ընդունվի «ՀՀ բացառիկ կարևորության ագրարային տարածաշրջանների մասին» օրենք։ Ագրարային հատվածում տնտեսավարողներին այդպիսի կարգավիճակ շնորհելու գլխավոր նպատակը մարզի և նրա տարածաշրջանների ու լանդշաֆտային գոտիների գյուղատնտեսության մասնագիտացման և ներճյուղային կառուցվածքի բարելավման ու բարձր ավելացված արժեք ապահովող արտադրության խթանման միջոցով հանրապետության պարենային անվտանգության ապահովման մեջ կարևոր դեր խաղացող գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումն է։

Տնտեսության ագրարային հատվածի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության վերոհիշյալ օրինագծի առանցքային գաղափարն այն է, որ չփոշիացվի պետական աջակցությունը, այլ կենտրոնացվի ագրարային «աճի բևեռների և կենտրոնների» վրա, որոնք վճռական դեր ունեն հանրապետության պարենային անվտանգության ապահովման մեջ[3]։ Այդ համատեքստում քննարկվող ճյուղի պետական կարգավորման խնդիրը կդառնա ոչ թե մակրոտնտեսական խթանումը, այլ «աճի բևեռների և կենտրոնների» ստեղծմանն ու աջակցությանը և դրանց ազդեցության գոտիների ընդարձակմանն ուղղված քաղաքականությունը։

Ուստի անհրաժեշտ է տարածաշրջանային կշռադատված քաղաքականություն վարել՝ «աճի բևեռների և կենտրոնների» գերակա աջակցությունը զուգակցելով առնվազն անկումնային տարածքների անհրաժեշտ աջակցությանը (մարզեր, տարածաշրջաններ, գյուղական համայնքներ ու բնակավայրեր)։ Բայց այդպիսի զուգակցումը պետական աջակցության շոշափելի ավելացում է պահանջում։

Տնտեսական անկումնային տարածքներում անխուսափելիորեն ձևավորվում է «ժողովրդագրական վակուում», սրվում է հանրապետության համար խիստ հրատապ՝ ակտիվի վերարտադրության և կապիտալի վերածվելու մարդկային ռեսուրսների հիմնախնդիրը, որը, իր

[3] Տե՛ս **Գ. Ղամբարյան,** ՀՀ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրության հարցի շուրջ // «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», Հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2015, էջ 107–108։

հերթին, հանրապետության տնտեսական ներուժի և տնտեսական աճի տեմպերի կրճատման վտանգ է ստեղծում: Լեռնային և բարձրլեռնային գյուղական համայնքներում տարածքների ամայացումը, որտեղ արձանագրվել է գյուղական բնակչության բարձր արտագաղթ, ցանքաշրջանառությունից գյուղատնտեսական հողատեսքերի դուրս գալու համար օբյեկտիվ նախադրյալներ են ստեղծվում, որը հակասում է Հայաստանի տնտեսական և աշխարհաքաղաքական շահերին:

Տնտեսության ագրարային հատվածի զարգացման տարածաշրջանային ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով դանդաղել է նաև գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը և մասնագիտացումը խթանող տարաբնակեցման գործընթացը:

Ապրելակերպի ցածր մակարդակը և որակը բացասաբար են ազդում գյուղական տարածքներում ժողովրդագրական վիճակի վրա: 2016 թ. տարեսկզբին գյուղական բնակավայրերում ապրում էր 1091,6 հազ. մարդ՝ հանրապետության ամբողջ բնակչության 36,4 %-ը: Միայն վերջին 15 տարվա ընթացքում (2001–2016 թթ.) գյուղական բնակչությունը պակասել է ավելի քան 55,3 հազարով, որի հետևանքով գյուղական բնակչության բացարձակ ցուցանիշը 2016 թ. կազմել է 1116 հազ. մարդ: Գյուղական բնակչության թվի կրճատման հիմնական պատճառներն են մահացության գործակցի աճը, ծնելիության նվազումը և արտագաղթը: Գյուղական բնակչության հավելաճը 15 տարվա ընթացքում կազմել է 120,9 հազ. մարդ, արտագաղթը՝ 168,3 հազ. մարդ: ՀՀ 8 մարզերի գյուղական տարածքները դեպոպուլացված են: Այդ գործընթացները մեծ չափերի են հասել լեռնային և սահմանամերձ տարածաշրջանների գյուղական բնակավայրերում: Դեպի քաղաքներ և արտասահմանյան երկրներ գյուղական բնակչության արտագաղթը հատկապես մեծ է Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի ու Կոտայքի մարզերից:

ՀՀ-ում տեղի է ունենում գյուղական բնակավայրերի ցանցի ամայացման և մանրացման գործընթաց: Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի տվյալների՝ հանրապետությունում կար 953 գյուղական բնակավայր՝ 924-ը մշտական բնակչությամբ: Վերջին միջմարդահամարային ժամանակաշրջանի ընթացքում ՀՀ քարտեզից վերացել են մշտական բնակչությամբ 29 գյուղական բնակավայրեր: Այս միտումների պահպանման դեպքում այդպիսի գյուղերի թիվը աճելու է: Եթե 1979 և 1989 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում գյուղական բնակավայրերի մշտական բնակչությունը տարվա ընթացքում միջին հաշվով ավելացել է 3095.5 մարդով, ապա հաջորդ (2001–2011 թթ.) միջմարդահամարային ժամանակահատվածում պակասել է 4344.3-ով: Վերջին 15 տարվա ընթացքում առանց բնակչության՝ դատարկ գյուղական բնակավայրերի մասնաբաժինը ավելացել է 2.7-ից մինչև 4.3 %-ով, իսկ մինչև 100 մարդ բնակչությամբ՝ 5.1-ից մինչև 6.9 %-ով :

Տարաբնակեցման մանրատված բնույթը դժվարացնում է ոչ միայն գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և գո-

տիական մասնագիտացման խնդիրը, այլև գյուղական տարածքների սոցիալական կառուցապատումը:

Ճյուղում դեռ շատ են վնասաբեր տնտեսությունները՝ ընդհանուր քանակի 20–25 %-ը: Մի շարք մարզերում՝ Շիրակ, Լոռի, Կոտայք, Վայոց Ձոր և Սյունիք, դրանց թիվը հասնում է 50 %-ի, իսկ բարձրլեռնային ու սահմանամերձ տարածաշրջաններում ու համայնքներում վնասաբեր են գյուղացիական տնտեսությունների 2/3-ը: Գյուղատնտեսության ոլորտում գործող տնտեսավարման տարբեր ձևերի շահութաբերության միջին մակարդակը (մինչև հարկադրումը, ներառյալ սուբսիդիաները) կազմում է ընդամենը 11-12 %, ինչը ապահովում է միայն պարզ վերարտադրություն, բայց ոչ բավարար է ընդլայնված վերարտադրության համար (անհրաժեշտ է ոչ պակաս 25 %): Իսկ եթե շահույթից ետ պահվեն բյուջեից ստացվող սուբսիդիաները, շահութաբերության մակարդակը իջնում է մինչև 1,4 % և նույնիսկ մինչև վնասաբերության մակարդակ: Ըստ որում՝ գործնականում բոլոր տնտեսությունները վարկավորված են. վարկատուի պարտքը 1,3–1,4 անգամ գերազանցում է տարեկան հասույթը: Բացի դրանից, գյուղատնտեսության մեջ աշխատավարձը կրկնակի պակաս է հանրապետության միջին ցուցանիշից: Այդ բոլորը ցույց է տալիս, որ տնտեսության ագրարային հատվածից դուրս են բերվում ողջ հավելյալ արժեքը և անհրաժեշտ աշխատավարձի մակարդակի կեսը:

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման կազմակերպումը կոնկրետ մարզում ու լանդշաֆտային գոտիներում իրագործվելու է սոցիալ-տնտեսական և էկոլոգիական նախագծերի ամբողջ համալիրի հաշվառմամբ: Այդ նախագծերի հիմնական նպատակը հանրապետության բնատնտեսական ներուժի հնարավորությունների գնահատման հիման վրա հեռանկարային նախընտրելի մասնագիտացման արտադրական ուղղությունների և համեմատական առավելություններ ունեցող գուղատնտեսական ապրանքատեսակների արտադրության խթանման գիտականորեն հիմնավորված կանխատեսումն է: Այդպիսի նախագծերի ստեղծման համար անհրաժեշտ է հետևյալը.

1. գոտիական մասնագիտացման, արտադրության ու ծախսերի ծավալների, ճյուղային ու տարածքային կառուցվածքի, ագրոարտադրական ռեսուրսների և բնական միջավայրի ու հողերի բերրիության պահպանության, դրանց օգտագործման հնարավորությունների մասին տեղեկություն ստանալու համար յուրաքանչյուր մարզի, նրա տարածաշրջանների և լանդշաֆտային գոտիների տնտեսական զարգացման և դրանցում տեղաբաշխված տնտեսական ու սոցիալ-մշակութային օբյեկտների վերլուծություն:

2. ՀՀ տարածքային զարգացման ռազմավարությունը պետք է իրականացնել սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բնութագրիչների ողջ համալիրի հաշվառմամբ, որը հատկապես կարևոր է տնտեսության ագրարային հատվածի ռացիոնալ տեղաբաշխման և գոտիական մասնագի-

տացման առումով, որը, ինչպես ոչ մի այլ ճյուղ, նախահակված է կոոպերացիայի զարգացման նկատմամբ: Դրա շնորհիվ յուրաքանչյուր վարչատարածքային կազմավորման սահմաններում կարող են ձևավորվել իշխանության տեղական մարմինների կողմից կառավարվող գյուղատնտեսական ապրանքարտադրողների տարբեր ընկերակցություններ: Սակայն դրանք չեն կարող հաջողությամբ գործել առանց ժողովրդագրական վիճակի հիմնավորված կանխատեսման: Դրա համար անհրաժեշտ է ճշտել մարզի և նրա տարածաշրջանների բնակչության և աշխատանքային ռեսուրսների ընդհանուր թիվը, ըստ որակավորման կազմի աշխատանքային ռեսուրսների ներտարածաշրջանային ու միջտարածաշրջանային արտագաղթի միտումները, բնակչության զբաղվածության և գործազուրկների մակարդակը, աշխատունակ տարիքի անձանց թիվը, կենսամակարդակը, բնակատեղը և կոմունալ սպասարկություններն ընդգրկող սոցիալական ենթակառուցվածքները (բնակելի տուն ու բակի շինություններ, ցանցավոր գազամատակարարում, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում և այլն), ճանապարհները, սոցիալ-կենցաղային ու մշակութային նշանակության օբյեկտները և այլն:

3. Անհրաժեշտ է մարզի սահմաններում առկա ըստ լանդշաֆտային գոտիների դրանց գոտիական մասնագիտացման, գյուղական տարաբնակեցման ու արտադրության ռացիոնալ տեղաբաշխման համակարգերի կատարելագործման հիմնախնդիրներն ընդգրկող գյուղական տարածքների կայուն զարգացման հայեցակարգ, այդ թվում՝ հեռանկարային նախընտրելի մասնագիտացման արտադրական ուղղությունների ու համեմատական առավելություն ունեցող ապրանքատեսակների արտադրության խթանումը, հացահատիկային, պտղատու, ընկույզա-պտղատու, չոր մերձարևադարձային, տեխնիկական մշակաբույսերի և այլնի նոր սորտերի աճեցումը:

4. Չափազանց կարևոր է մարզի և լանդշաֆտային գոտիների զծով ունենալ գյուղատնտեսական արտադրության ծավալների բնեղեն և արժեքային ցուցանիշներով տնտեսապես հիմնավորված հաշվարկը և դրա հիման վրա գյուղական տարածքների համաչափ զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով որոշել արտադրված գյուղմթերքների արտահանման, ներմուծման, ներդրումների և արտադրանքի իրացման հսկողության կազմակերպման հնարավորությունները:

5. Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման հիմնախնդրի ամբողջությունից չի կարելի բացառել գյուղական տարածքներում բնական լանդշաֆտների պահպանության, ագրոզբոսաշրջության ու հանգստի գոտիների և օրգանական գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Տնտեսության ագրարային հատվածի ռացիոնալ տեղաբաշխմանը և գոտիական մասնագիտացմանը նպաստող բնական, սոցիալ-տնտեսական և մշակութային ներուժը պահպանելու և ավելացնելու, գյուղական տարածքների կայուն զարգացումն ապահովելու, համազգային գործա-

ռույթներ կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու խնդիրը, ինչպես նաև գյուղական և քաղաքային բնակչության ապրելակերպի մակարդակի ու որակի միջև առկա էական տարբերությունների վերացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հաղթահարել ներգյուղային շրջանակները, իսկ ագրարային քաղաքականությունը ինտեգրել հասարակության սոցիալ-տարածքային ենթահամակարգերի զարգացման սոցիալ-տնտեսական և էկոլոգիական համատեքստի մեջ:

**Բանալի բառեր** – *տեղաբաշխում, մասնագիտացում, իրացման շուկաներ, տրանսպորտային ծախքեր, աշխատուժի վերարտադրություն, բնապահպանական-սոցիալ-տնտեսական տարածաշրջանային նախագծեր, ժողովրդագրական վիճակը*

**ВОЛОДЯ МАНАСЯН** – ***Проблемы организации рационального размещения и специализации сельскохозяственного производства в РА.*** – В статье проанализированы основные вопросы рационального размещения сельскохозяственного производства в Армении, а также его специализация. Подчёркнута зависимость этих факторов от расположения крупных городов и промышленных центров, поскольку необходимо учитывать транспортные издержки. Указаны также многочисленные экологические, социальные и экономические факторы, способствующие или, напротив, препятствующие концентрации и поясной специализации сельскохозяственного производства.

**Ключевые слова**: *рынки сбыта, транспортные издержки, воспроизводство рабочей силы, экологические, социальные и экономические региональные проекты, демографическая ситуация*

**VOLODYA MANASYAN** – ***Problems of Rational Placing Organisations and Specialization of Agricultural Production in RA.*** – In this article, the problems of rational accommodation and specialization of agricultural production in RA are discussed. The dependence of these factors upon placing of big cities and industrial centres, the necessity of transportation expenses calculation as well as a number of social-ecologo-economic factors promoting or impeding the concentration of agricultural production in our Republic are emphasized.

**Key words**: *location, specialization, markets for sale, transport costs, reproduction of labor power, ecological and socio-economic regional projects, demographic situation*